քեաց Աղվանից՝ Վրաց և Պարսից, և Հար-
կըս էառ. որոյ սահման իշխանութեանն ընդ-
արձակեցաւ պատուով ՚ի Խաղթայ մինչև
՚ի Թիֆլիզ, և յԱղուանից մինչ ՚ի Ծովն
Կասպից, ՚ի Տարօնայ և ՚ի Վանայ մինչև
՚ի Ծովն Կեղանայ: Սա ԺԲ. մեծ պարոնաց
երթայր ՚ի պատերազմ: Կայսրն Յունաց
Ռօմանոս՝ թագ առաքեաց սմա: Եւ Յու-
սուֆ Խալիֆայն՝ որ զօրագլուխ էր, առա-
քեաց զԱպուսէթ ՚ի Պարտաւ և ՚ի Հայս՝
հարկահան: Եւ ՚ի պահանջել զհարկն,
Սմբատ յաղթեալ հալածեաց զԱպուսաթ
զառաջինն: Եւ քուերորդի Սմբատայ՝ Գա-
գիկ՝ որ նստէր իշխան ՚ի Վան՝ հակառակ Սմ-
բատայ, թագ եդ ՚ի գլուխ իւր՝ օգնականու-
թեամբ Պարսից. և զեղբայր իւր զԳորդ ա-
ռաքեաց Պարսից Շահին, որ միաբանու-
թեամբ եկին ՚ի վերայ Սմբատայ և յաղ-
թեցան: Եւ վասն Երնձակաց խռովու-
թեանն՝ դարձեալ զօրաժողով եղեն Պար-
սիկք և Վանցիք, և եկին ՚ի վերայ Սմբա-
տայ: Եւ իշխանքն Հայոց նենգեցին

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան